

Դեղորսի ակերուն վրայ բարձր փաղափարթու-
թիւն արտադրեր է բայց ոչ Հայաստանի մէջ.
և կամ թէ մի և նոյն ցեղին կը պատկանին
Պուլկարը, Հունգարացին, Ֆինլանտացին և
Թուրքը, վերջապէս թէ նոյն Ալա ցեղը թէ՛
կարճալուի է և թէ երկարալուի:

Մ. ՄՐԱՍԽԱՆ

ԱՄԱՎԵՐՁԻ ՀՆՏԻՆՍԸ

Մ. Ռ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Յուլիս 6ին կիրակի օրը, Մ. Ռ. Վար-
ժարանի թիէֆոլեան գեղանկար պերճ
դահլիճը խոնքեր էր հոծ բազմութեամբ.
1923-1924 ուսումնական տարւոյն վեր-
ջալոյսն էր, ամաւերջի հանդէսը: Ամէն
տարի նոյն տեղ, նոյն օրերը և նոյն ոճով
միշտ տեղի կ'ունենայ այդ, սակայն միշտ
նոր է, միշտ գեղեցիկ և խանդավառ քան
ուրիշ ամէն հանդէս կամ տոնախմբութիւն,
քանի որ միշտ նոր են այն քաջերը որ
կը պատկուին, միշտ նոր այն մարտիկները
որ յաղթութեան պատկեր կը խլեն. հուսկ
միշտ նոր և չքնաղ այն շատախոյնները որ
կ'ընծիւղին հայութեան յոյսերն ու լոյսերն
անեցնելու:

Հոն էր բերկրալից՝ վենետարնակ հայ
զաղութը պանդուխտ. մանաւանդ թէ շա-
տեր հեռու և մօտ քաղաքներէ հոն փու-
թացեր էին ներկայ ըլլալու ցանկալի հան-
դէսին: Հոն էր վանքիս պաշտօնական
մարմնոյն հետ՝ մինչև յետին վանականը:
Ազգային հանդէսը կը պատուէին իրենց
ներկայութեամբ տեղուոյ թէ՛ եկեղեցական
և թէ՛ քաղաքական իշխանութեան պաշ-
տօնական մարմինները. առաւելութեամբ
- այս տարի - ներկայութեան Գաղղիոյ
հիւպատոսին ի վենետիկ:

Այս տարի վարժարանին անխոնջ դաս-
տիարակները ազգին կը նուիրէին 14
շրջանաւարտ պատանիներ, որոնց երեսին
վրայ կը ցոլար նոյն պահուն գոհութեան
ժպտը, քանի որ իրենց դաստիարակներուն
և պատկառելի հանդիսականներուն ներկա-

յութեան պիտի ստանային՝ հաստատուն
կամքի, յարատև և համերատար աշխա-
տութեան ու քրտանց արժանի վարձա-
տրութիւնը: Անոնք ուրախութեան հետ
անհուն երախտեաց արտայայտութիւն
մ'ալ ունէին հանդէպ իրինց Բարերար-
ներուն և դաստիարակներուն: Երջանիկ
էին որ Երկինք շնորհեր էր իրենց բախ-
տը՝ հազարաւոր թշուառներէ զիրենք նախ-
ընտրելով, այդ գեղարուեստի անմահ
վայրին մէջ, զթոտ բազուկներու մէջ սնա-
նիլ կրօնքի և դիտութեան ամենապիտիւն և
սուրբ սկզբունքներով, մարգուլի ու զի-
նուիլ՝ արիութեամբ մղելու կեանքի պայ-
քարը յաղթութեան զբաւականը ձեռքեր-
նուն մէջ:

Ժամը 5 էր երբ խանդավառ հանդէսը
բացին « Բամ փորոտան » ի հոգեթունդ
պայթիւնով, Մ. Ռ. Վարժարանի սաները.
հանդիսականներն յտընկայս ունկնդրեցին
մոզիչ երգը. աշակերտներու կորովի շեշտը,
խանդավառ ոգին ու ներշնչուած զգալ
տուին օտարներուն՝ թէ « Հայաստան ան-
կեր, բայց ոչ է անցեր ». եռանդուն սա-
ները կը ցուցնէին որ արդարև « ազնիւ
ցեղի մ'արիւն ունէին » որ չի մեռնիր:

Բուռն ծափեր կը պատկէին քայլերգը.
աշակերտաց հետ և անոնց պէս կարծես
ոգևորուեր էին հանդիսականներն ալ:

Երգարանն հանդիսին ծրագրիր գեղեց-
կօրէն յօրինուած էր. եւրոպական երա-
ժըշտութեան հետ հայկական երգերն ալ
- թէպէտ մեկամաղձիկ, բայց միշտ մեզ
սիրելի - խառն էին: Պեւլիթիի, Չայրով-
քիի հրաշալի և աշխոյժ թրթուսներուն
հետ կը լսուէր « Մայր Արաքսի » հեծե-
ծանքը, անշուշտ գեղեցիկ մտածութեամբ
ազուցուած երգերու շարքին. չէ՛ որ շԸԲ-
ջանաւարտ սաները նոր նոր յոյսեր ու
լոյսեր էին տառապեալ հայրենիքին. ա-
նոնք պիտի երթային ընդ փոյթ Արաքսի
ափերը, հոն, անոր ալեաց մէջ փնտռելու
« հին հին զարուց յիշատակ », ու աւերակ-
ներուն մէջէն վերականգնել Հայաստան
ըլ:

Երգերն ընդմիջեցան երեք շրջանաւարտ

սաներու ոգելից խօսքերէն հայ — զազղ — իտակ շեշտեցով. անոնք մինչ պանծանօք կը դրուատէին կրօնքն, հայրենեաց և գիտութեան ցանկալի անանդնեան ու հարստութիւնները ստացած իրենց անխոնջ ջանքերով, երախտագիտութեան ու օրհնէքի զեղուն զգացումներ կը նուիրէին այն բարերարներուն, այն դաստիարակներուն որոնք իրենց երջանկութեան յանձնածին եղբր էին. և հուսկ հրաժեշտի ողջոյնը կու տային շնաշխարհիկ վեհեակին, որուն կարխարդանքն անջինջ դրոշմուած էր իրենց երևակալութեան մէջ. կնիք իրենց խօսքերուն հաստատուն առաջադրութիւնն էր սիրել ու գործել իրենց ողբացեալ հայրենիքին համար. երեքն ալ, թարգման իրենց միւս բնկերներուն՝ բուն և խանդավառ ծափերու արժանացան:

Ուսուցութեան և յուզման ժամ կը նուրզէր հին յուշեր երջանիկ մանկութեան անպարձ դրուագներէն. նոյն այդ յարկին տակ աճած ու մեծցած հայ հանճար մ'էր որ իտալերէն լեզուով բայց հայկական շեշտով կը լսեցնէր իր ձայնը, ծանօթ Տօթթ. Ասլանը. քառասուն տարիներու ետին ամբարձած կը դիտէր իր մանկութեան պատկերը կենդանի ու չքնաղ ներկայ ոգևորումէն յարուցեալ, ու թշուառ հայրենիքին աղէտներուն համայնապատկերին մէջ անոր փրկութիւնն և իր սփոփանքն և յոյսերը կը գտնէր այս խոստումնալից ժիւր հոգիներուն մէջ, որոնք ծծեր են կրօնքի և գիտութեան սնունդը վեհեակի Առիւծին փրկարար թեւերուն տակ, Մեծին Մխիթարայ անմահ ոգիէն: Հայաստան և իտալիա իրեն կրկին հայրենիքներ, սէր ու զմայլանք կը թոցնեն սրտէն. և շրջանաւարտներուն ուղղած բարեմաղթութիւնն ու խրախոյսի յորդորները կը խառնուէին ծափերու տարափին՝ զոր կը շտայլէր հանգիստական բազմութիւնը:

Կը շարունակէին երգերը, երբեմն մեղմ և անոյշ, յամբ շեշտով մը որ խորհրդածել կու տար. և երբեմն աշխոյժ և վառվռուն որ կ'ոգևորէր ամէն հասակ մանկական խանդով:

Հասեր էր հանդիսաւոր վայրկեանը, վկայականներու բաշխումը. բեմ ելաւ վարժարանի ուսուցնապետը, Հ. Կիրեբղ վ. որ համաժամ ակնարկով գծեց ուսումնական տարեշրջանին կարած ուղին, և հուսկ ձեռք բերած յաղողութիւնը շնորհիւ ուսուցիչներու անձնուէր, ժիւր ջանքերուն և աշակերտաց համապատասխան ետանդուն և հաստատակամ գործակցութեան: Նա կը ցուցնէր թէ դաստիարակ, ուսուցիչ և աշակերտ նոյն սրբազան նպատակներէն թեւադրուած ու մղուած՝ ուրախութեամբ կ'ողջունէին այդ տարւոյն վերջալոյսը և մերձակայ ապագային յուսալից արշալոյսը հայ հայրենիքին, որուն զաւակներն էին այդ շրջանաւարտ պատանիները, որով և անոր վերածնութեան դատին ախոյեանները պիտի ըլլային:

Ուսուցնապետ Հօր մեղով շեշտին տակ ամփոփուած իմաստալից խօսքերը իրենց արձագանգը կը գտնէին ծափահարութեանց տարափով. և նա ուրախ շեշտով և գուհունակութեամբ կը հուշակէր շրջանաւարտ սաներու անունները, որոնք նոյնպէս գուհութեան ժպիտն երեսուն՝ կ'ընդունէին իրենց սիրելիներէն կամ բարձրաստիճան հանդիսականներէն իրենց վկայականներէն: Երաւանակելով իր խօսքերը, իր ուրախակցութիւնն յայտնեց պսակուած քաջերուն, յորդորելով գանոնք ամբիժ և անաղարտ պահելու կրօնքի և հայրենեաց կրկնակի դրօշը՝ որուն տակ պիտի զինուորէին, ու ողջերթ մաղթեց անոնց երջանիկ ապագայի մը մէջ:

Այնքան կարծես աւարտեր էր երբ ոտք ելաւ Ֆրանսական հիւպատոսը, և համառօտ ուղերձով մը յայտնեց Ֆրանսացի ժողովրդեան մեծ համակրութիւնը դիւցազն հայութեան, ինչպէս նաև իր և թրեատի Ֆր. Գիսպանին գոհունակութիւնը վարժարանի սաներուն՝ իրենց բրած նշանակելի յառաջադիմութեան Ֆրանսական լեզուի և մատենագրութեան մէջ, և ի հաւաստի իր ըսածին՝ թրեատի Գիսպանին կողմանէ եկած նուէրն — Գաղղիական

Մատենագրութեան ընտիր հեղինակութիւն մը — երկու մեծ հատոր — ընծայեց նոյն լեզուին և մատենագրութեան մէջ յառաջադէմ աշակերտին, կարպիս Գասպարեանի:

Հանդէսը վերջացաւ. գոհութեան նշոյլն ամենուն երեսին վրայ կը ցոլար հանդէպ Հայաստանի նորընծիւզ յոյսերուն. ամէն ոք լին կամ խօսուն ուրախութեան և գոհութեան սիրագեղ մաղթանք մ'ունէր ամէն շրջանաւարտի համար. յետին բա-

ժակն էր ցնծութեան որ վարժարանի սեւ մերուն վրայ կ'ըմպէին. և նորածագ արշալոյսին, նոր կեանք, նոր ասպարէզ պիտի թեւակոխէին: Կը մաղթենք լիա սիրտ, որ այդ ասպարէզը նորանոր յաղթանակներու մրցարան մը դառնայ ամենուն՝ երջանկացնելու զիրհնք և իրենց հետ ամբողջ Հայաստան:

Հ. ԵՂԻԱ ՓԷՏԻՆԻԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Դ Ե Կ Ի Ե Տ

Հ. Ս. Խ. Հ. Ժողովրդակամ կոմիսարների խորհրդի հմուտիւժների պահպանութեամ մասին:

1. Հանրապետութեան սահմաններում գտնւած ամեն տեսակի հնութեան յուշարձաններ՝ կանգուն, կիսաւեր կամ բոլորովին աւերակ, առանձին—առանձին թէ խմբական ձեւով, իրենց ամբողջ շրջաններով, ուր պահւած են նրանց հետքերը, այսինքն նախկին քնակութեանց վայրերը, վանքեր, ամրոցներ, քաղաքատեղիներ, գիւղատեղեր, կամ առանձին կերտուածներ, լինին նրանք գետնի երեսին թէ հողով ծածկուած, իրենց նախկին տեղում թէ առաջուց տեղահան արուած — կազմում և պետական սեփականութիւն են պետք և մնան միանգամայն անաղարտ և անձեւեմխելի:

2. Հնութիւնների պահպանութիւնը պետական կարեւորագոյն խնդիր է, որ ի կատար է ածում Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատը՝ «Հնութիւնների պահպանութեան կոմիտէի» միջոցով:

3. Հնութիւնների ուսումնասիրութիւնն ազատ է բոլոր գիտական կազմակերպու-

թիւնների և անհատների համար, սակայն առանց որ և է փոփոխութիւն մտցնելու նրանց արտաքին ձեւի և դրութեան մէջ:

4. Ոչ ոք իրաւունք չունի առանց Հնութիւնների Պահպանութեան կոմիտէի պատշաճ թոյլտւութեան՝ կատարելու որ և է հնութեան պեղում, նորոգում, վերականգնում կամ տեղափոխում և առհասարակ հնութիւնների հետ կապ ունեցող որ և է այլ աշխատանք:

5. Խօսիւ արգելում է հնութիւնների արտահանումը, քանդելն ու փշացնելը և յուշարձանները կամ նրանց բեկորները իբրև նիւթ գործածելը նոր շինութիւնների համար:

6. Հնութիւններ ունեցող վայրերում և նրանց կից շրջաններում որ և է հանրօգուտ շինութեան (ճանապարհների, կամուրջների, ջրանցքների, հասարակական պահեստների և այլն) կառուցման զէպրում՝ ձեռնարկողները պարտաւոր են նախօրօք